Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-572-27.04.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքը լրացնել նոր 24.1-ին հոդվածով.

«**Հոդված 24.1 Ոստիկանության իրավունքները լողամիջոցների շահագործմանը ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս**

1. Ոստիկանությունը լողամիջոցների շահագործմանը ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս հանցագործություններ կամ վարչական իրավախախտումներ կանխելու կամ բացահայտելու նպատակով կամ հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում իրավունք ունի.

1) կանգնեցնել լողամիջոցը և ստուգել նավավարման իրավունքի վկայականը և լողամիջոցի շահագործման համար օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև առերևույթ անսարքությունների առկայությունը.

2) Կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացնել նավավարի սթափության վիճակի ստուգում.

3) լողամիջոցը վարելուց մեկուսացնել ոչ սթափ վիճակում գտնվող անձանց.

4) ստուգել հրդեհային անվտանգության սահմանված կանոնների պահպանումը.

5) տիրապետողի կամ քաղաքացիների ներկայությամբ զննել լողամիջոցը, ինչպես նաև փոխադրվող բեռը՝ քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, նյութեր և իրեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, հանցագործության գործիքներ և հանցագործության հետքեր կրող այլ առարկաներ տեղափոխելու մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ առկա լինելու դեպքերում.

6) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքերում արգելել լողամիջոցի շահագործումը:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքերում լողամիջոցը իրավասու պաշտոնատար անձի կողմից տեղափոխվում է լողափնյա հատվածներից դուրս գտնվող ափային տարածք կամ լողամիջոցների կանգատեղի՝ մինչև նշված հիմքերի վերանալը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքում նավավարի կամ սեփականատիրոջ համաձայնությամբ լողամիջոցը կարող է հանձնվել նավավարման իրավունքի վկայական ունեցող այլ անձի:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Տեղեկանք

Կ-572-27.04.2023-ՊԱ-011/0
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ **նոր** 24.1-ին հոդվածով.

«**Հոդված 24.1 Ոստիկանության իրավունքները լողամիջոցների շահագործմանը ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս**

1. Ոստիկանությունը լողամիջոցների շահագործմանը ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս հանցագործություններ կամ վարչական իրավախախտումներ կանխելու կամ բացահայտելու նպատակով կամ հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում իրավունք ունի.

1) կանգնեցնել լողամիջոցը և ստուգել նավավարման իրավունքի վկայականը և լողամիջոցի շահագործման համար օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև առերևույթ անսարքությունների առկայությունը.

2) Կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացնել նավավարի սթափության վիճակի ~~զննություն~~ ստուգում.

3) լողամիջոցը վարելուց մեկուսացնել ոչ սթափ վիճակում գտնվող անձանց.

4) ստուգել հրդեհային անվտանգության սահմանված կանոնների պահպանումը.

5) տիրապետողի կամ քաղաքացիների ներկայությամբ զննել լողամիջոցը, ինչպես նաև փոխադրվող բեռը՝ քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, նյութեր և իրեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, հանցագործության գործիքներ և հանցագործության հետքեր կրող այլ առարկաներ տեղափոխելու մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ առկա լինելու դեպքերում.

6) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքերում արգելել լողամիջոցի շահագործումը:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքերում ~~Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում~~ լողամիջոցը իրավասու պաշտոնատար անձի կողմից տեղափոխվում է լողափնյա հատվածներից դուրս գտնվող ափային տարածք կամ լողամիջոցների կանգատեղի՝ մինչև նշված հիմքերի վերանալը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքերում նավավարի կամ սեփականատիրոջ համաձայնությամբ լողամիջոցը կարող է հանձնվել նավավարման իրավունքի վկայական ունեցող այլ անձի:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-572-27.04.2023-ՊԱ-011/0) ԵՎ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-572[1] -27.04.2023-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք «Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի Նախագծի 1-ին հոդվածում «լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-ին հոդվածով.» ձևակերպումը փոխարինել «լրացնել նոր 24.1-ին հոդվածով» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «3. Նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություն**	«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի Նախագծով նախատեսվում է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 4-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում եւ 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «ջրային լողամիջոցներ» բառերը փոխարինել «լողամիջոցներ» բառով: Վերը նշվածից պարզ է դառնում, որ օրենքի Նախագծով նախատեսվում է փոփոխվող օրենքում կատարել ոչ թե մեկ, այլ երկու փոփոխություն, ուստի առաջարկում ենք Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ «1. Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:»: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում» ձեւակերպումը փոխարինել « 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում» ձեւակերպմամբ, քանի որ փոփոխվող հոդվածը կազմված է ոչ թե կետերից, այլ՝ պարբեթություններից:		
3.	ՀՀ կառավարություն	«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի Նախագծի 1-ին հոդվածում	Նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում» ձևակերպումը փոխարինել «4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում» ձևակերպմամբ	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության**	Առաջին ընթերցմամբ ընդունված	**Ընդունվել է**	Ընդունվել է

		մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի Նախագծի 1-ին հոդված	««Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենք լրամշակված նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվում է «Ոստիկանության մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել 24.1-ին հոդվածով, որի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ոստիկանությունը լողամիջոցների շահագործմանը ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս հանցագործություններ կամ վարչական իրավախախտումներ կանխելու կամ բացահայտելու նպատակով կամ հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում իրավունքի ունի Կառավարության որոշմամբ սահմանված կարգով իրականացնել նավարարի **սթափության վիճակի զննություն**: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին մասը, որով սահմանված է վարչական պատասխանատվություն լողամիջոցը ոչ սթափ վիճակում վարելու կամ **սթափության վիճակը որոշելու համար ստուգումից** խուսափելու համար: Նկատի ունենալով, որ նշված դրույթում կիրառվում է «սթափության վիճակը որոշելու համար ստուգում» ձևակերպումը, իսկ Նախագծով «սթափության վիճակի զննություն» ձևակերպումը՝ գտնում ենք, որ Նախագծով	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 24.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «զննություն» բառը փոխարինվել է «ստուգում» բառով:	

			նախատեսված ձևակերպումն անհրաժեշտ է համապատասխանեցնել վերոնշյալ դրույթին:		
5.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող 24.1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում և 2-րդ մասում «իրավախախտումների վերաբերյալ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի **կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը** և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:	**Ընդունվել է** Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող 24.1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում և 2-րդ մասում «իրավախախտումների վերաբերյալ» բառերից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող 24.1-ին հոդվածի 2-րդ մասով հղում է կատարվել նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերին, իսկ նշված կետով հղում է կատարվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված դեպքերին: Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը, համաձայն որի՝ **արգելվում է կատարել՝ շարունակական հղումներ, երբ նորմը, որին հղում է կատարվում, իր հերթին հղում է կատարում մեկ այլ նորմի՝** անհրաժեշտ է կարգավորումները վերանայել:	**Ընդունվել է** Նախագծի 1-ին հոդվածով Օրենքում լրացվող 24.1-ին հոդվածի 2-րդ մասում «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում» բառերը փոխարինվել են–«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 125.1-ին հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով նախատեսված իրավախախտման դեպքերում» բառերով:	Ընդունվել է

ՀՀ կառավարություն